ՄԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՍ ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Հոգեբանական գիտության մեջ առկա ինքնագիտակցության գործընթացի և նրա անմիջական արդյունք հանդիսացող ես կոնցեպցիայի ուսումնասիրության մեթոդները ոչ միայն բավական փոքրաթիվ են և չհամակարգված, այլև շատ հաճախ նաև համապարփակ չեն և դիտարկում են երևույթը մասնակիորեն՝ սահմանափակվելով դրա որևէ մասնավոր դրսևորման ուսումնասիրությամբ: Այս մտահոգությամբ մենք ձեռնարկեցինք ինքնագիտակցության գործընթացի և դրա անմիջական արգասիք հանդիսացող ես կոնցեպցիայի ուսումնասիրության մեթոդիկայի մշակում, որը ընդգրկում է անհատի կողմից իր ես-ի գիտակցման գրեթե բոլոր ասպեկտները՝ ես կոնցեպցիայի կառուցվածքային բոլոր տարրերը:

Մեթոդիկան հանդիսանում է ինքնադիտման մեթոդի[1] մասնավոր տարատեսակը: Մեր տարբերակում այն իրականացվում է գրավոր՝ հարցաթերթիկային եղանակով: Մեթոդիկայի մշակման վերոհիշյալ՝ եղանակը ընտրվել է որոշակի նկատառումներով, որոնք ներկայացվում են ստորև.

- Նախ՝ այն թույլ է տալիս է առավելագույնս կարճ ժամանակահատվածում ուսումնասիրել առավելագույնս մեծ թվով անհատների, այս իմաստով, առավել հարմար է կիրառել գիտահետազոտական աշխատանքում:
- Հետազոտության ընթացքի առումով՝ գրավոր ինքնահաշվետվությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրվողին ազատ՝ առանց կաշկանդվելու ուսումնասիրողի ներկայությունից, անսահմանափակ ժամանակում իրականացնել հանգամանալից, տրամաբանորեն կապակցված ինքնադիտում: Քանի որ տվյալ ոլորտը շոշափում է անձնավորության խիստ ինտիմ ներանձնային ասպեկտները, բանավոր հարցման դեպքում ուսումնասիրողի անմիջական ներկայությունը, խոսքային ու ոչ խոսքային հակազդումները կարող են կաշկանդել և սահմանափակել տեղեկատվության հոս-

[1] Ինքնադիտման մեթոդ. անձի կողմից սեփական վարքի ու ապրումների ընկալման գործընթացն է, որն անհրաժեշտ է ինքնաիմացության և ինքնավերահսկողության համար: Այն հոգեբանության հիմնարար և ամենահին մեթոդներից է, մշակվել է դեռևս է 19-րդ դարում ինտրոսպեկցիոնալիստական ուղղության շրջանակներում, որպես դրա հիմնարար մեթոդ և առ այսօր, հանդիսանում է ինքնագիտակցման գործընթացի առանձնահատկությունների, դրա անմիջական արգասիք հանդիսացող՝ ԵՍ-կոնցեպցիայի բովանդակության ուսումնասիրության ամենաօպտիմալ և արդյունավետ եղանակը:

քը: Բացի այդ գրավոր հարցման դեպքում ուսումնասիրողը հնարավորություն է ստանում, կողքից՝ առանց միջամտելու, հետևել գիտափորձին՝ ֆիկսելով ուսումնասիրվողի վարքային դրսևորումները և այլն:

- Գրավոր ինքնահաշվետվությունը տեղեկատվական առումով առավել ընդգրկուն է, հարուստ, նրանում առկա տեղեկատվությունը տրամաբանորեն համեմատաբար կապակցված է, հաջորդական, որը լայն հնարավորություններ է տալիս տվյալների հետագա վերամշակման, վերլուծության համար: Հարցաթերթիկում հարցերը դասավորված են որոշակի նպատակաուղղվածությամբ: Յուրաքանչյուր հարցախումբ ուղղված է բացահայտելու և ուսումնասիրելու Ես կոնցեպցիայի կառուցվածքային կոնկրետ տարր: Բացի այդ, հարցախմբերը և դրանցում ընդգրկված հարցերը դասավորված են այնպիսի հաջորդականությամբ, որը նպաստում է փորձարկվողին աշխատանքի մեջ ներգրավվել առավելագույնս արագ և հեշտ:

Մեթոդիկան ոչ միայն լայն հնարավորություններ է ստեղծում ինքնագիտակցության գործընթացի առանձնահատկությունների և դրա անմիջական արտադրանք հանդիսացող Ես կոնցեպցիայի բովանդակության իմաստային, որակական, քանակական դրսևորումների, այլև անհատի ինքնաարժևորման առանձնահատկությունների հանգամանալից ուսումնասիրության համար: Այն հնարավորություն է տալիս ուսումնասիրելու նաև ինքնագիտակցության գործընթացի հետ անմիջականորեն առնչվող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ ժամանակային անընդհատության (անցյալ, ներկա, ապագա կապի) գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունները, անհատի կողմից իր ապագայի գիտակցված պլանավորման աստիճանը, նպատակադրումը, ինչպես նաև անձի ընդհանուր ուղղվածության, նրա հետաքրքրությունների, նախասիրությունների շրջանակի իմաստավորման առանձնահատկությունները:

Մեթոդիկան ունի տարբերակներ՝ ուսումնասիրելու արական և իգական սեռի ներկայացուցիչներին: Այն կարելի է կիրառել 12-ից բարձր տարիքի բոլոր անձանց ուսումնասիրության համար մասնագիտական գործունեության ամենատարբեր ոլորտներում: Մեթոդիկան զգալիորեն հեշտացնում է ոչ միայն գիտահետազոտական, այլև կիրառական հոգեախտորոշման բնագավառում աշխատող հոգեբանի աշխատանքը, քանի թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում իրականացնել արագ, օպերատիվ հոգեախտորոշում, տեղեկատվություն ստանալ ցանկացած մարդու ներանձնային առանձնահատկությունների, մասնավորապես՝ անձի՝ իր մասին պատկերացումների, ինքնաարժևորման, ինքնակարգավորման, առանձնահատկությունների, դրանց զարգացման մակարդակի վերաբերյալ:

Մեթոդիկայի վալիդությունը ապահովվում է այն հիմնավորումներով, որոնք բացահայտում են հարցաթերթիկում՝ առանձին հարցախմբերի և դրանցում առկա հարցերի տրամաբանական կապը տեսական այն հիմքի հետ, որի հիման վրա կառուցվել են դրանք[2]:

Մեթոդիկայի մշակման համար տեսական հիմք են հանդիսացել հոգեբանական գիտության մեջ առկա հոգեկանի գործառնության վերաբերյալ հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, մասնավորապես՝ արտացոլման իմացաբանական տեսության Լ.Ս. Վիգոտսկու «Հոգեկան բարձրագույն ֆունկցիաների պատմամշակութային զարգացման տեսության», Ա. Ն. Լեոնտևի «Գործունեության հոգեբանական տեսության» հիմնադրույթները և, դրանց հիման վրա ձևակերպված, ինքնագիտակցության ու դրա անմիջական արգասիքը հանդիսացող ես կոնցեպցիայի վերաբերյալ հիմնական հայեցակետերը:

Այժմ անդրադառնանք առանձին հարցախմբերի և դրանցում առկա հարցերի բովանդակության և տանք հարցաթերթիկում դրանց ներգրավման տեսական հիմնավորումները: Ինչպես հայտնի է, ես-ի կողմից իր բովանդակությունների (տեղեկատվության) ձեռքբերման սկզբնաղբյուրը օբյեկտիվ իրականությունն է: Օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող, գործառնող բազմաթիվ օբյեկտների շարքում առաջնայինը կարելի է համարել արտաքինից այդ ես-ը պարփակող ֆիզիկական մարմինը՝ այդ մարմնից եկող իմպուլսները:

Ես-ի հիմնախնդրով զբաղվող գրեթե բոլոր ուսումնասիրողների միակարծիք համոզմամբ՝ Ռ. Ջեյմս, Ռ. Մեյլի, հոգեվերլուծական ուղղության ներկայացուցիչներ Զ. Ֆրոյդ, Ժ. Լական, խորհրդային հոգեբանական դպրոցի ներկայացուցիչներ Տ. Շիբուտիանի, Ե. Տ. Սոկոլովա, Ի.Ս. Կոն, Ա.Ա. Նալչաջյան, անգլիացի ուսումնասիրող Ռ. Բերնս, Ֆիզիկական կերպարի՝ մարմնային առանձնահատկությունների գիտակցումը ընկած է ես կոնցեպցիայի առանցքում և ենթակա է գիտակցման ու արժեվորման առաջին հերթին: Ուսումնասիրությունները[3] ցույց են տալիս, որ սեփական անձը բնութագրելիս՝ մարդկանց մեծ մասը սկսում է իր ֆիզիկական առանձնահատկությունների նկարագրությունից, քանի որ այն համարում է իր ես-ի կարևորագույն բաղկացուցիչը:

Այս հիմնավորմամբ հարցաթերթիկում հարցերի առաջին խումբը (1, 1ա) նպատակաուղղված է անհատի կողմից սեփական մարմնային, ֆիզիկական առանձնահատկությունների գիտակցման արժևորման ուսումնասիրու-

---

[2] Кун М., Макпартлэнд Т. Кто Я. / Статья/ Современная зарубежная социальная психология. Тексты. М.1984.

[3] Р.Мейли. Различные аспекты Я. / Статья/. Экспериментальная психология. Под. Ред. П.Фресса, Ж. Пиаже. М.1975.

թյանը: Ինքնագիտակցման ենթակա հոգեմարմնային առանձնահատկությունների շարքում առանցքային տեղ է զբաղեցնում անհատի կողմից իր որպես որոշակի սեռի ներկայացուցչի առանձնահատկությունների՝ գիտակցումը, դրա իմաստավորումն ու արժեքորումը: Այս նկատառումներով՝ հարցաթերթիկի վեցերորդ հարցախումբը (6ա, 6բ, 6գ, 6դ), նպատակաուղղել ենք ուսումնասիրելու ես կոնցեպցիայի վերոհիշյալ բաղադրիչը՝ բացահայտելու անհատի կողմից իր սեռային պատկանելիության, իր՝ որպես տվյալ սեռի ներկայացուցչի՝ սեռային դերի կրողի և դրան բնորոշ անձնային որակների գիտակցման, արժեքորման և իմաստավորման առանձնահատկությունները:

Իր արտահայտվածությամբ ես կոնցեպցիայում մարմնային առանձնահատկություններից հետո երկրորդ տեղում է անհատի կողմից իրականության, գործունեության և հաղորդակցման տարբեր ասպեկտներում դրսևորվող հոգեկան հատկությունների[4] գիտակցումը, իմաստավորումն ու արժեքորումը: Երկրորդ հարցախումբը (2, 2ա, 2բ) նպատակուղղված է ուսումնասիրելու անհատի կողմից իր բնավորության գծերի գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունները: Այս հարցախմբում ներառված է նաև լրացուցիչ հարց (2գ)՝ նպատակաուղղված պարզաբանելու տվյալ անձի պատկերացումները իդեալական մարդու մասին (իդեալական ես-ը): Այն հնարավորություն կտա ուրվագծել անձնավորության հնարավոր զարգացման ընդհանուր ուղղվածությունը:

Խորհրդային հոգեբանության հիմնարար սկզբունքներից մեկի համաձայն անձի ինքնահիմացությունը իրականանում է միայն նրա կողմից իրականացվող գործունեության ու միջանձնային հաղորդակցման մեջ և դրա միջոցով: Այս տեսակետը որպես մեթոդաբանական դրույթ ընկած է ինքնագիտակցության հիմնախնդրով զբաղվող խորհրդային հոգեբանական դպրոցի այնպիսի ականավոր ներկայացուցիչների աշխատությունների հիմքում ինչպիսիք են Բ. Գ. Անանևը, Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Ն. Լեոնտևը, Ս. Լ. Ռուբինշտեյնը և այլոք:

Ըստ Ա. Ն. Լեոնտևի անձը ճանաչում է ինքն իրեն և ուրիշներին ամենատարբեր գործունեություններ իրականացնելու ընթացքում, և դրա անմիջական արդյունքներով: Նրա կարծիքով զարգացման գործընթացում սուբյեկտի կողմից իրականացվող առանձին գործունեությունները հիերարխիկ հարաբերու-

---

[4] Ս.Լ.Ռուբինշտեյնը հոգեկան հատկությունը սահմանում է որպես անհատի ընդունակությունը, որոշակի հոգեկան գործունեությամբ հակազդելու որոշակի օբյեկտիվ ազդեցությանը: Հոգեկան հատկությունը հոգեկան գործունեության ամրակայումն է, որը իրականանում է գործունեության պայմանների ընդհանրացման և ստերեոտիպականացման արդյունքում: Նա տարբերակում է հոգեկան հատկությունների երկու հիմնական խմբեր բնավորության գծեր և ընդունակություններ:

թյունների մեջ են մտնում և կազմում է անձի միջուկը, որ և հանդիսանում է բուն ինքնահիմացության օբյեկտը:

Խորհրդային դպրոցի մեկ ուրիշ ուսումնասիրող՝ Մ. Ի. Լիսինան ինքնահիմացության և ընդհանրապես անձնավորության ինքնագիտակցության ձևավորման կարևորագույն և անհրաժեշտ նախապայման է համարում հաղորդակցումը: Նրա կարծիքով հաղորդակցումը սեփական Ես-ը ճանաչելու լավագույն ուղին է, իսկ սեփական Ես-ի մասին պատկերացումները իրենց հերթին անմիջականորեն պայմանավորում է հաղորդակցման առանձնահատկությունները: Նա համոզված է, որ անհատը ճանաչում և արժևորում է ինքն իրեն միայն ճանաչելով և արժևորելով ուրիշին: Այս առումով հաղորդակցումը, որպես երկկողմանի գործընթաց, բերում է նրան, որ ինքը՝ իմացություն իրականացնողը, վերածվում է իմացության օբյեկտի:

Վերոհիշյալ հիմնավորումներով՝ հարցաթերթիկում հարցերի երրորդ խումբը (3, 3ա, 3բ, 3գ, 3դ), նպատակաուղղված է պարզաբանելու անձնավորության կողմից իր Ես-ի գիտակցման առանձնահատկությունները որպես գործունեության սուբյեկտի, իսկ չորրորդ (4, 4ա, 4բ, 4գ,) և հինգերորդ (5, 5ա, 5բ, 5գ, 5դ) հարցախմբերը պարզաբանելու անհատի կողմից իր Ես-ի գիտակցման առանձնահատկությունները նրա համար նշանակալից անձանց հետ հաղորդակցման ենթատեքստում: Վերջինս տրամաբանորեն ենթադրում է նաև անհատի կողմից իր առանձնահատկությունների գիտակցումը, իմաստավորումն ու արժևորումը որպես որոշակի սոցիալական դերերի կրողի:

Հարցաշարում ընդգրկել ենք նաև հարցախումբ (7, 7ա) նպատակաուղղված բացահայտելու անձի ընդհանուր ուղղվածության, նրա կողմից իր հետաքրքրությունների շրջանակի, նախասիրությունների գիտակցման ու իմաստավորման առանձնահատկությունները, քանզի համարում ենք, որ դրանք ևս հանդիսանում են ինքնահիմացության առարկա: Անձի ինքնահիմացության հիմնահարցով զբաղվող հեղինակների միահամուռ կարծիքով, ինքնագիտակցության զարգացվածության կարևորագույն չափորոշիչներ են անհատի կողմից ժամանակային առընթերության, շարունակականության գիտակցումը, իմաստավորումն ու արժեվորումը՝ վարքի և գործունեության ռետրոսպեկտիվ ու պերսպեկտիվ ընկալումը, և սրա հիման վրա՝ վարքի ու գործունեության պլանավորման նպատակադրման ընդունակությունը: Այս առումով հարցաթերթիկում հարցերի վերջին՝ ութերորդ խումբը (8, 8ա, 8բ, 8գ, 8դ) ուղղված է պարզաբանելու անհատի կողմից ժամանակի անընդհատության (անցյալ, ներկա, ապագա կապի) գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունների, իր ապագայի վերաբերյալ պատկերացումների հստակությունը, ինչպես նաև նրա կողմից գիտակցված

պլանավորում և նպատակադրում իրականացնելու ընդունակության զարգացման մակարդակը:

Հարցաթերթիկում վերջին՝ իններորդ հարցը ուղղված է հարցվողների ինքնագիտակցման անմիջական ընթացքի առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Այսպիսով, հարցաթերթիկը ընդգրկում է 9 հարցախումբ, 17 հարց, որոնք նպատակաուղղված են ուսումնասիրելու անհատի կողմից իր՝

1. Արտաքին տեսքի, ֆիզիկական, մարմնային Ես-ի գիտակցման և արժևորման առանձնահատկությունները:
2. Բնավորության գծերի՝ մասնավորապես ամրակայված հուզա-կամային որակների գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունները:
3. Ես-ի գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունները՝ որպես գործունեության սուբյեկտի:
4. Տեղի ու դերի գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունները հաղորդակցման մեջ՝ միջանձնային հարաբերություններում՝ որպես որոշակի սոցիալական դերերի կրողի:
5. Ես-ի գիտակցման, իմաստավորման և արժևորման առանձնահատկությունները՝ որպես կոնկրետ սեռային պատկանելիության և սեռային դերի կրողի: Նրա կողմից՝ հակառակ սեռի ներկայացուցիչների հետ փոխհարաբերությունների գիտակցման, իմաստավորման ու արժևորման առանձնահատկությունները:
6. Ընդհանուր ուղղվածության, հետաքրքրությունների շրջանակի, նախասիրությունների գիտակցման իմաստավորման ու արժևորման առանձնահատկությունները:
7. Ապագայի հստակ տարբերակված գիտակցման, իմաստավորման ու արժևորման առանձնահատկությունները, դրա գիտակցված պլանավորման աստիճանը, նպատակադրումը, պատկերացումները անձնական կյանքի, մասնագիտության վերաբերյալ և այլն:
8. ժամանակային հեռանկարի՝ անցյալ-ներկա-ապագա կապի՝ անխզելիության (միասնության) գիտակցման առանձնահատկությունները:
9. Ինքնագիտակցման անմիջական ընթացքի առանձնահատկությունների ուսումնասիրություն:

Տվյալների առաջնային ներմուծումից հետո իրականացվում է հարցաթերթիկի բովանդակության քանակական, որակական և իմաստային վերլուծու-

թյուն ընդհանուր և մասնավոր չափորոշիչների[5] հիման վրա: Ընդհանուր չափորոշիչների շարքում են՝

1. Շարադրանքի քանակական արտահայտվածությունը՝ մանրամասն կամ համառոտ: Սա վկայում է այն մասին, թե անհատի գիտակցության մեջ որքանով մանրամասն հստակ և տարբերակված է արտացոլվում նրա Ես-ն ու դրա առանձին ասպեկտները: Մեր կարծիքով, շարադրանքի քանակական արտահայտությունը հանդիսանում է ինքնագիտակցման գործընթացի դինամիկայի և դրա անմիջական արդյունք հանդիսացող Ես կոնցեպցիայի կառուցվածքային և բովանդակային արտահայտության կարևորագույն չափորոշիչը:

2. Ինքնագիտակցության գործընթացի դինամիկայի և դրա հիման վրա ձևավորվող Ես կոնցեպցիայի կառուցվածքային և սեմանտիկ առանձնահատկությունների բացահայտման հաջորդ կարևորագույն չափորոշիչը շարադրանքի որակական առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Այն ենթադրում է շարադրանքում օգտագործված հասկացությունների և որակական առանձնահատկությունների և դատողությունների բնույթի ուսումնասիրություն: Որակական վերլուծությունը ներառում է իրենում այնպիսի մասնավոր չափորոշիչների փաստում, ինչպիսիք են՝ շարադրանքի տրամաբանականությունն ու հետևողականությունը, համակարգվածությունն ու ընդհանրացվածությունը, տարբերակվածությունն ու միանշանակությունը:

3. Ինքնագիտակցման գործընթացի դինամիկ ակտիվության և դրա հիման վրա ձևավորվող Ես կոնցեպցիայի առանձնահատկությունների բացահայտման մյուս կարևոր չափորոշիչը շարադրանքի իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրությունն է: Այն ենթադրում է հարցաթերթում ներգրավված առանձին հարցախմբերի և դրանցում ամփոփված հարցերի իմաստային առանձնահատկությունների վերլուծություն:

Իմաստային մասնավոր չափորոշիչների շարքում կարևորվում են՝

- շարադրանքում ինքնազարգացման, ինքնակարտարելագործման և ինքնաիրականացման վերաբերյալ դատողությունների առկայությունը:
- անհատի կողմից իր ապագայի հստակ տարբերակված գիտակցումն ու իմաստավորումը, դրա գիտակցված պլանավորման աստիճանը, նպատակադրումը, պատկերացումները անձնական կյանքի, մասնագիտության վերաբերյալ և այլն:
- անհատի կողմից ժամանակային հեռանկարի՝ անցյալ-ներկա-ապագա կապի՝ անխզելիության (միասնության) գիտակցումն ու իմաստավորումը:

---

[5] Մասնավոր չափորոշիչները որոշվում են յուրաքանչյուր կոնկերտ հարցաշարի շրջանակներում՝ պայմանավորված ուսումնասիրության կոնկրետ խնդիրների և նպատակների համապատասխան:

4. Ինքնագիտակցության գործընթացի դինամիկայի և ես կոնցեպցիայի զարգացման մակարդակի ուսումնասիրության ընդհանուր չափորոշիչների շարքում առաջնային տեղ է զբաղեցնում օբյեկտիվ իրականության նկատմամբ շարադրանքի բովանդակության հարաբերական համարժեքության մակարդակի ախտորոշումը, որի արդյունքում բացահայտվում է ուսումնասիրվողի ինքնարժևորման առանձնահատկությունները, մասնավորապես՝ օբյեկտիվ իրականության նկատմամբ դրա հարաբերական համարժեքության մակարդակը:

Օբյեկտիվ իրականության նկատմամբ շարադրանքի հարաբերական համարժեքության բարձր մակարդակը վկայում է ուսումնասիրվողների ինքնագիտակցման գործընթացի և դրա անմիջական արդյունք հանդիսացող ես կոնցեպցիայի զարգացվածության ու ձևավորվածության մասին, որի դեպքում անհատը ընդունակ է հարաբերականորեն համարժեք արժևորել ինքն իրեն և ընդհակառակը:

Ես կոնցեպցիայի բովանդակության օբյեկտիվ իրականության նկատմամբ հարաբերական համարժեքության աստիճանի ախտորոշման նպատակով առաջարկում ենք կիրառել էքսպերտային գնահատման մեթոդը: Էքսպերտների դերում հանդես են գալիս ուսումնասիրվող անձին լավ ճանաչող անձիք, հարազատներ, ընկերներ, հակառակ սեռի ներկայացուցիչներ և այլն: Նրանց առաջարկվում է վեց բալանոց համակարգով գնահատել հարցաթերթիկի բովանդակության՝ օբյեկտիվ իրականության նկատմամբ հարաբերական համարժեքության մակարդակը: Էքսպերտների խմբում նպատակահարմար է ընդգրկել նվազագույնը տաս, առավելագույնը քսան անձ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ананьев Б.Г. Избранные психологические труды. М.1980. Том 1, 2
2. Бернс Р. Развитие Я концепции и воспитание. М.1986.
3. Выготский Л.С. Собрание сочинении. М.1984
4. Джемс У. Психология. М.1991.
5. Кон И.С. Открытие Я. М. 1978.
6. Кон И.С. Введение в сексологию. М.1988
7. Лакан Ж. Инстанция буквы в бессознательном. М.1997
8. Леонтьев А.Н. Избранные психологические произведения. В. 2-х т. М. 1983.
9. Лисина М.И. Проблемы онтогенеза общения. М.1986.
10. Налчаджян А.А. Социально-психологическая адаптация личности. Е. 1988.
11. Психология самосознания. Самара 2003.
12. Рубинштеин С.Л. Бытие и сознание. М.1957.
13. Соколова Е.Т. Самосознание при аномалиях личности. М.1989.
14. Спиркин А. Г. Философия. М.2001.
15. Шибутани Т. Социальная психология. М.1969.
16. Фрейд З. Избранное. М.1990.